


THE DICKRIS PUBLISHING CO. 628 Third Avenue, NEW YORK CITY.



ՏԻԳՐԻՍԻ ՍԻՆԱԿԵՐԸ ԲԱՑ ԵՆ ԺՈՂՈՎՈՐԴԻՆ ԱՌՋԵՒ:

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն, Գ Ր Ա Կ Ա Ն ԵՒ Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Ա. ՏԱՐԻ, ԹԻՒ 30

ՆԻՒ ԵՈՐԲ, ՇԱԲԱԹ, ՅՈՒՆԻՍ, 4 1898

ԳԻՆ 3 ԱՆԵԹ

ԿԼԱՏՏՐՈՆԻ ԹԱՂՈՒՄԸ

Ներկայ դարը որ նարդի- ոններով ու մի ապե առ- թեամբ սկսեցաւ, կը վեր- ջանայ Ուէսթմինսթրի մէջ Կլատտրոնով ու առակա- վարութեամբ:

Ճէյմս Կրիլման

Կլատտրոնի մարմինն իսկու ժո- ղովորդեան դուռնէ վերջ, անցեալ Շարաթ օր ամփոփուեցաւ Ուէսթ Մինսթրի մէջ, Պիքոնսֆիլդի ար- ձանին քով: Հանգուցեւոյն խնդրա- նօք թաղումը խիստ պարզ կերպով կատարուեցաւ, որուն ներկայ էին Անգլիոյ բարձրաստիճան պաշտօնեա- ներն ու բազմաթիւ ներկայացուցիչ- ներ ուրիշ ազգերու, որոց մէջ էր նաև Հայոց ներկայացուցիչն: Գաղաղա- կիրներն էին Վէլլի իշխանը, Լօրա Սալիսպուրի, Մր. Պալֆուր, Բէմ- պլերի դուքսը, Լօրա Ռոզպէրի, Սըր Ուիլիամ Զաքորթ և ուրիշներ: Տիեզերական ցաւակցական ցոյցերուն մէջ, զորս ընդհանուր մարդկու- թիւնը պարզաւ Մեծին Կլատտրոնի դազաղին շուրջը, երկու պզտիկ ու սգաւոր ազգերունը ամենէն պարզ, բայց ամենէն ազդու կերպով արտա- յայտուածներն էին դէպի մեծ Անգ- ղիացին:

Հայերը, որոնք երկիրը ընդար- ձակ դերեզմանատուն մըն է այսօր, մեծ ծերունիի դազաղակալը նուի- րած էին, որուն վրայ, Ուէսթմին- սթրիի հանգստավայրին մէջ, Հան- գուցեւոյն մարմինը հանգչեցաւ քա- նի մը օր: Իսկ Յունաց Լոնտօնի դեսպանը դարնի շիւղ մը դրաւ Յունաստանի բարերարի կուրծքին վրայ, և հանգաւոր ողբերգ մը մա- մուլին միջոցաւ՝ մեծ ծերունիի յի- շատակին:

Այսպէս կրօնքի և բանաստեղ- ծութեան երկրպագու և սուկալի բըռ- նութեան տակ հեծող այս երկու ազ- գերը՝ իրենց սղբակցութիւնը և ցաւ- ակցութիւնը յայտնեցին դարուս մեծ Ռամկավարականի յիշատակին:

Եւ ազատ երկիրներու Հայերն ալ, ինչպէս անցեալ կիրակի Նիւ Եորքի մէջ, իրենց տաճարներուն ու լրուսազարդ խորանի առջև, խուն- կի ծուխին ողորմներու հետ ա- ղօթքի միմունջներ բարձրացուցին դէպի երկինք՝ մեծ Անգլիացիի հո- գիի հանգստին համար:

Մուսաներու յաջորդ Հեղինները դարնի շիւղով մը, իսկ Նարեկացիի գաւակներն ալ աղօթքի միմունջը- ներով թաղեցին այն մարդը որ մէկ ազգը ազատած էր՝ իսկ միւսին հա- մար ալ ըսած էր պէտք է ազատի... Թ. Չ.

Կ. ՊՈԼՍՈՑ ԱՄԲՐԻԿԵԱՆ ՆՈՐ ԴԵ Ս Պ Ա Ն Ը

Ճէյմս Էնճէլ, Կ. Պոլսոյ ամե- րիկեան դեսպանը՝ շարժուս մէջ հը- րաժարեցաւ իր պաշտօնէն, ու նա- խագահ Մաք Բինլի անոր յաջորդ կարգեց Մր. Օսկըր Ըսթրալս, քա-

ղաքիս հարուստ վաճառականներէն մին, որ մինչև 1881 փաստաբան մ'ու նշանաւոր քաղաքագէտ մ'էր ի Նիւ Եորք: Ընթերցողը կը յիշեն անշուշտ թէ նախագահ Բինլիի անուանումը պաշտօնավարութեան օրով, 1887ին, Մր. Ըսթրալս միանգամ ներկայա- ցուց արդէն Միացեալ Նահանգներն թուրք կառավարութեան քով. եւ կ'ըսուի թէ մեծ կարողութիւն ու պաշտօնին յարմարութիւն ցոյց տու- աւ այն առնու: Տեղակալ լրագիրնե- րը կըսեն թէ այս է պատճառն որ նախագահ Մաք Բինլի փոխանակ ան- փորձ հասարակագետական մը կոչելու այս պաշտօնին, լուազոյն սեպած է փորձառու ուսմիավարական մը ընտ- րել, զի կը կարծուի թէ այս պատե- րազ մէ վերջ Միացեալ Նահանգներն իրենց համակիր ունենալով զՄեծն Բրիտանիա, խիստ քաղաքականու- թեան պիտի հետեւին դէպի Արևելքի «հիւանդ» երկիրը՝ ամերիկեան քա- ղաքացիներու ծանօթ պահանջներն զանձնու համար:

ՊԱՏԵՐԱՋՄԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—Մր. Հօրան, նոյնանուն ընդ- ծովայ թորփիլանու հնարիչը, հը- րաման խնդրեց կառավարութեանն սպանիական նաւատորմին երթալ ընկղմելու համար: Կառավարութիւ- նը մերժեց այս առաջարկ:

—Շարժուս սկիզբներն մտահո- գութիւն պատճառեց Աւստրիոյ բըռ- նած ընթացքն Միացեալ Նահանգաց զէմ: Կը վախցուէր թէ կայսրը՝ ու- րիշ միջոց մը չունենալով օգնել Ըս- պանիոյ թագուհիին՝ պատճառ մը կը փնտէր բացարձակապէս միանալ Տօ- ներուն հետ:

—Տիեզերական ինքնազուգեան Ընկերութիւնն, որոյ կեդրոնատեղին կը գտնուի Ֆիլադելֆիայ, ինտիմէն- տէնա շէնքի մէջ, շարժուս մէջ Ըս- րանիոյ թագուհիին համակրական նա- մակ մը գրեց իր նախագահի, Մր. Լըվի միջոցաւ: Այս նամակ թղթա- տարութիւնն մերժեց ընդունիլ, ու զայն վերադարձուց Ընկերութեան պաշտօնատեղին: Աւելորդ է ըսել թէ մեծ իրարանցում հանեց այս մի- ջազէպ: Տիեզերականներն մատնիչ անուանուեցան ամէն կողմէ. և պաշ- տօնատեղին, որ կառավարութեան կողմէ առանց վարձու տրուած էր անոնց, ետ առնուեցաւ:

—Քիւպայի նախկին դահիճը, Վայ- Լըր, Միացեալ Նահանգներն արշա- ւել կ'երազէ...:

—Մատրիաի Թայմզեան թղթա- կիցը կը հեռագրէ թէ Սպանիոյ Ար- տաքին Գործոց նախարարութիւնն միջոցներ կը փնտէր իրազարկութիւնն վերահաստատելու համար: Զարմա- նալի չէ այս ի հարկէ:

—Սպանիական Կառավարութիւնն հրաման ըրած է որ 1000 թծոյէ վեր եղող ամեն սպանիական շոգենաւ

իր օժանդակ գործածուի նաւատոր- միղին համար:

—Ուաշինկթընի կառավարութիւ- նը 250 հազար Մեքսիկոյի տղար գը- նեց՝ հատը 46 սէնթէն: Այս դրամ- ներն Մանիլայ պիտի զրկուին, ուր անոնց իւրաքանչիւրը մէկ տղար կարժէ:

—Մր. Էլքինս, ծերակոյտի պահ- պանողական մէկ անդամը, որ հա- կառակ էր պատերազմին, վերջերս ըսած է թէ՝ Մօնրօյի վարդապետու- թիւնը քանի որ մեռեալ տառ մ'է այսուհետեւ, պէտք է որ Ընքըլ Սամ տիրէ ո'չ միայն Ֆիլիպեան կղզիներ- ուն, Բիւպայի, Փօրթօ Ռիքոյի եւ Հաւանայի, այլ և պարտի Միջերկ- րականի մէջ պատերազմական յար- մար կայարան մը ձեռք բերել: Աշ- խարհակալութեան տէնչ:

—Երկու պատերազմական օդա- պարիկներ հասան Մարսիլայէ՝ բա- նակին հետ Բիւպայի գրկուելու համար:

—Քաղաքիս Ուրլա լրագրի եր- կու թղթակիցներն թըրօլ և ձօնա, որք գերի բռնուած էին, փոխանակ- ուեցան երեք սպանիացի բարձրաս- տիճան գերիներու հետ: Թղթակից- ներն Նիւ Եորք հասան վերջերս:

—Քաղաքիս նախագահը ճառի մը մէջ ըսաւ թէ Ֆրանսա չէջոք պիտի մնայ այս պատերազմին մէջ՝ բառի բովանդակ նշանակութեամբ:

—Մոլավար Ըլշէլ լուր գրկեց պա- տերազմական ժողովին թէ թշնա- մին գտած ու բանտարկած է Սան- թիակոյի նաւահանգստին մէջ: Այս լուր պաշտօնապէս հաղորդուեցաւ մամուլը՝ Ուաշինկթընի կառավարու- թեան կողմէ:

—Փորթ Անթօնոյէ քաղաքը հե- ռագիր մը կ'ըսէ թէ անցեալ կիրա- կի երկու երկու սպանիական թօր- փիլանու Սանթիակոյի նաւահանգիս- տէն դուրս եկած են քաղաքողի՝ Ըշ- լէյի զրահանակներ կործանելու հա- մար: Թէքոստ և Պրուքլին ժամա- նակին տեսած են թշնամին և իրենց թնդանօթներով վանած են զայն:

—Զօրավար Լաքըթթ 500 մարդ, 7000 հրացան և երկու միլիօն փամ- փուշտ հանեց ի Բիւպայ և յանձնեց զանոնք հոն սպասող 1500 զինեալ Բիւպայիներուն:

—Զօրավար Կարտիա կ'ըսուի թէ 10000 զինեալ ու կրթեալ քիւպայի- ներ ունի իր հրամանին տակ ի Պայա- մոյ՝ յառաջ խաղալու պատրաստ:

—Ուաշինկթընի Գաղղիական դեռ- պանատան ծանուցուեցաւ թէ՝ Գաղղիա եթէ թոյլատրէ սպանիական լրատեսներն ու պաշտօնեաներն լուր զրկել Բիւպայ՝ Ֆրանսական հեռագ- րաթերով, Միացեալ Նահանգներն պիտի կտրեն զայն: Գաղղիա բողո- քեց այս սպանուալիքին դէմ:

—Մայիս 24 ին ծովակալ Տուվի Մանիլայի նաւահանգիստը գտնուող անգղիական շոգենաւի մը հրաման ըրաւ որ դուրս ելնէ նաւահանգիս- տէն: Կը կարծուի թէ Տուվի նպա- տակ ունի երկրորդ զեղաւատ մ'ևս տալ Մանիլայի սպանիացիներուն:

—Կառավարութիւնն 150 հազար տղար յատկացուցած է Մանիլայի նաւահանգիստը ամրացնելու համար թօրփոսու և ականներ գնելու համար:

—Նահանգապետ Փինկրի, որ կօ- չիկի գործարան մ'ունի, իւր նահան- գի, Միչիկըն, կամաւորներուն կօ- չիկները հայթայթել առաջարկեց կա- ռավարութեան:

—Տիկին Լէյթըր, Չիքագոյի համ- բաւար ցորենի վաճառականին կի- նը, Չիքագոյի մէջ գտնուող մէկ պանդոկն զնեց՝ կառավարութեան նուիրելու համար իրը հիւանդանոց:

—Սպանիա կ'ըսուի թէ կը գրգռէ Մեծն Բրիտանիա՝ անոր հետ դժուար- ութիւն մը ունենալու համար, որ- պէս զի միւս կառավարութիւններն առիթ ունենան Սպանիոյ կողմը բըռ- նել:


—Քէյփ Հայթիլի միացեալ մամ- ւոյ ներկայացուցիչներն Հովանայէ և Սանթիակոյէ լուր տան թէ Բեք- շարթի օր ամերիկեան նաւատորմի- զը Սանթիակոյի նաւահանգիստը մը- տած, բերդերն ու Սէրվէրայի զրա- հաւորներն ումրակոծել սկսած:

—Վերջի հեռագիր մը կ'ըսէ թէ ամերիկեան 14 նաւեր, ծովակալ Սամ- սընի դրօշականաւին հետ միասին Սանթիակոյի բերդերն մոխիր դար- ձուցած են: Ռմբակոծութեանց ա- տեն սպանիական զորահանա մը օգ- նութեան եկած է բերդերուն: Բայց մի քանի անգամ կրակելէ վերջ ա- պաստանած է ներսերն: Ռմբակոծու- թիւնն սկսած է Երեքշարթի օր ժա- մը 2ին՝ և տեսած է մէկ ու կէս ժամ:

Թէ և մանրամասնութիւնները հասած չեն տակաւին, բայց կ'ըսուի թէ սպանիացուց կորուստը խիստ ծանր եղած ըլլալու է. բայց Հովանայի մէջ ժողովուրդը «սպանիական փա- ռաւոր յաղթութիւնն» կը տօնէ նո- բէն: Այս ումրակոծութեան նպատակն Սանթիակո քաղաքը գրաւել չէ եղեր, այլ առիթ չի տալ Սպանիացուց որ բերդերը ամրացնեն: Երբ ճէնէրալ Մայլըս, որ թամբայ կը գտնուի այ- ժմ, ցամաքէն Սանթիակոյի վերա- քալէ, յայնժամ նաւատորմիզը բեր- դերն ու սպանիական բանտարկեալ զրահանակներն ումրակոծել պիտի սկսի՝ քաղաքը գրաւելու դիւրութիւն տա- լու համար ցամաքային զօրութեան:

ՄԱՀԱԳՈՅԹ

Ցաւ ի սիրտ կը ծանուցանենք թէ այրի Տիկին Փ. Մ. Այվատ, նախա- գահ Որբախնամ Տիկնանց ընկերու- թեան և մայր Տ. Փ. Մ. Այվատի, յետ կարճատե հիւանդութեան կըն- քեց իր մահկանացուն անցեալ Ե- րեքշարթի օր: Յուղարկուողութեան հանդէսը տեաի ունեցաւ Հինգշարթի Ս. Ոսկերբան եկեղեցու մէջ ի ներ- կայութեան բազմաթիւ բարեկամաց ու ազգականաց: Տ. Պաղ վարդա- պետ և Տ. Վահրամ ք. կատարեցին կրօնական արարողութիւններն, ու մարմինն ամփոփուեցաւ Պրուքլինի Էվրկրին գերեզմանատան մէջ:



ՇԱՐԱՍԹԵՐԻՍ ԱՉԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱՔԱԿԱՆ
ԿԸՆՏՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՄԸՆ ՇԱՐԱՔ ՕՐԵՐ,
ՏԻԳՐԻՍ Հրատարակչական Ընկերութեան կողմանէ:
Յ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ, ԳԱՆՉԱՊԵՏ:


ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ՈՒ — ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ
ԲԱՆԱՏԱՅԻ ՀԱՄԱՐ
ՏԻ. ՍԹ. Տարեկան 10 Քրանք.
Տարեկան 1 50
Վեցամսեայ 75
Եռամսեայ 40
Բաժանորդագրին ԿԱՆՈՒԿ
ՎՃԱՐԵԼԻ Է ԴԻՂԱ:

Մտար կամ նամակ ուղղել Հետեւեալ Հասցէին՝
To the DICKRIS PUBLISHING CO., 628 Third Ave., New York City.

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter.

ՆԻՒ ԵՈՐԻ, ՇԱՐԱՔ, ՅՈՒՆԻՍ 4 1898.

Ո Մ Բ Ա Գ Բ Ա Կ Ա Ն Ք



Գուցէ շատեր անհե-
թեթ պիտի նկատեն
մեր այսօրուան խորա-
զիրը, ու ոմանք այս
խնդրի ժամանակն ար-
դէն անցած պիտի հա-
մարին, բայց իրողու-
թիւնն այս է որ այս

հարց դեռ շատ անգամ բերել հարկ է ժողովրդի առջև՝
զայն՝ ըստարժանոյն՝ քննելու, ծեծելու և հիմնական կեր-
պով լուծելու համար, վասն զի թէ և ըստ երեւոյթին խըտ-
րութիւնը վերցուած կը սեպուի, բայց ի ներքուստ անսակ
մը խուլ ատկութիւն գոյութիւն ունի անակաւին թէ՛
Բողոքական Հայոց և թէ՛ Հայ Եկեղեցւոյ զաւակաց շատե-
րու արտին մէջ: Կան մարդիկ որք այս իրողութիւնն ծած-
կել կ'աշխատին՝ յուսալով որ վերքը օր մը ինքնին կը
բուժուի՝ ծածկոցին ներքեւ. բայց՝ մեր կարծեօք՝ աւելի
օգտակար է խնդիրն հրապարակի վրայ ծեծել, քան ծած-
կել զայն մթնոլորտն մէջ, զի մութը խաւարով չի լուսա-
ւորուիր: Վերքը վերաբուժի խնամոց կը կարօտի:

Մեր այս հարց ծնունդ առած է իբր կէս դար առաջ, երբ
Բողոքականութիւնն մուտ գտաւ ի Հայաստան: Եւ որով-
հետեւ Հայ ժողովուրդը զարգացած չէր այնչափ որչափ
զարգացած կրնայ սեպուիլ այսօր, ընդհանրապէս կարծուե-
ցաւ թէ Հայ Եկեղեցիէն բաժնուող Հայերն բաժնուած
էին նաև Հայ ազգութենէն, որ ո՛չ միայն Հայ եկեղեցի-
էն, այլ և Բրիտանիանէն հին էր դարերով:

Նախ խոստովանելու ենք թէ Հայաստանեայց եկե-
ղեցին էր որ միջին և վերջին դարերու մէջ Հայ ազգու-
թիւնն պահեց և փրկեց. և ո՛չ որ կրնայ ուրանալ թէ կար
ժամանակ մը յորում մեր նախահարգ եկեղեցիէ զատ ու-
րիչ բանով մը չէին կրնար զանազանուիլ ուրիշ ազգերէ:
Բայց հիմայ տարբեր է բոլորովին. յառաջագիւտութեան
ու զարգացման լոյսին զօրութեամբ իրողութիւններն ու
ճշմարտութիւնն կրնանք աւելի զիւրութեամբ տեսնել: Այ-
ժմ Բրիտանիանէն ինքնին չէ որ ազգերն կը զանազանէ ի-
րարմէ, և ոչ ալ այս կամ այն յարանուանութեան կամ
եկեղեցիին վերաբերիլը բաւական է մարդուս ազգութիւնն
որոշելու համար: Անգլիական եկեղեցիին վերաբերելով
մէջը անգլիացի չ'ըլլար. ինչու եկեղեցին մարդը Մոսքօֆ
մը չընէր, այսպէս ալ Հայաստանեայց եկեղեցւոյ զաւակ
ըլլալը բաւական չէ մարդս Հայ ընելու համար: Ամերի-
կացին, Յոյնը, Հրեայն և մինչև անգամ Տաճիկը կրնայ
զալ ու Հայ-եկեղեցւոյ տաճարին առջև՝ Սահակայ և Մե-
րոպի փարախին մէջ մտնել, բայց այդ կրօնափոխութիւնն
իրաւունք չի տար անոնց Հայ կոչուելու համար: Այնպէս
ալ՝ փոխադարձաբար՝ Հայաստանեայց եկեղեցիէն բաժնուող
Հայէ մը ոչ որ կրնայ իր ազգութեան անձեռնմխելի ի-
րաւունքը խլել՝ տարբեր ձևով ու տարբեր շէնքի մը մէջ
զԱստուած պաշտել ուղիւն համար: Հայը Հայ է՝ տար-
բերութիւն չընէր որ եկեղեցիի ալ վերաբերի, վասն զի
Բառաթեկին վրայ զուտուող Աստուածորդին ազգութիւն
չի բերաւ մարդոց, այլ ուղիղ կրօնը սորվեցուց աշխար-
հիս: Մենք Հայ կոչուելու իրաւունքը Բրիտանիա աւետա-
րանէն չի սորվեցանք: Արարչագործութեան դարերէն իվեր
Հայ եղած ենք մենք, և Հայ ենք ցայսօր:

Յաւալի է տեսնել սակայն թէ մեզմէ շատեր Բողոքա-
կան կամ ոչ-բողոքական, դեռ ներքին համոզմամբ ըմ-
բռնած չեն այս ճշմարտութիւններն: Լուսաւորչականի
և Բողոքականի անպատուաբեր խնդիրն դեռ վերցուած չեն
բոլորովին մեր մէջէն, այլ միայն կեղծաւորութեան թան-
ձր քօյի մը տակ պահուած են սեղ սեղ: Այս իրողու-

թիւնն ապացուցանելու համար հարկ չկայ ապացոյցներ մէջ
բերել, զի փաստերն առատ են ամէն տեղ, և իրողու-
թիւնը ինքնին կը խօսին բարձրաձայն: Սակայն մոռնալու
չենք բացառութիւններն, որք այս խնդրի մէջ արժանի
են ամեն յարգանաց:

Ոչ որ կրնայ ուրանալ թէ Հայ և Բողոքական եկեղե-
ցիներու մէջ մեծ տարբերութիւն մը կայ, անանկ որ Բրի-
տանական սա երկու հաստատութիւններ կարելի չէ հաշտե-
ցնել իրարու հետ: Եւ եթէ ազգերն կրօնքով զանազան-
ուէին, ոչ որ պիտի մեղադրէր Հայ եկեղեցւոյ զաւակն՝
եթէ Բողոքականը Հայութենէն բոլորովին օտարացած նկա-
տէր: Սակայն եկեղեցին գործ չունի ազգութեան հետ:
Ազգ և կրօնք այնչափ անջուտ են իրարմէ, որչափ չեն
թերևս Հայ և Բողոքական եկեղեցիներ:

Սակայն՝ ամէն պարագայի տակ՝ Բողոքական Հայի մը
համար ներելի չէ Հայաստանեայց եկեղեցւոյ ընդ ահամբ
նայիլ, որովհետեւ այդ եկեղեցին կրօնական ըլլալէ զատ
Հայկական է և ազգային: Նա կը կրէ իր մէջ Հայութեան
ու հնութեան դրօշմը, որ մեր նախահարգ արեւմտ սըր-
բագործուած ու նուիրագործուած է՝ ամէն Հայու համար
նախորդ: Հայ մարդը ինի Բողոքական, Հռոմմէական կամ
այլ կրօն՝ պարտի սիրել ու յարգել այդ հաստատութիւնն՝
յորում իւր նախահարգ դարերով ազգութեցին ու պաշտե-
ցին զԱստուած: Հայը որ Հայաստանի քարն ու փայտը կը
սիրէ լոկ Հայկական եղած ըլլալուն համար՝ անհամե-
մատ աւելի սիրելու է այն եկեղեցին որ ազգութեան կը-
նիքը կը կրէ՝ ոչ զէ եթէ աւելորդապաշտութիւններ ալ
զտնէ անոր մէջ: Ազգային եկեղեցիէն բաժնուող Հայու
մը վրայ՝ ազգային տեսակէտէն նայելով՝ չենք կարող կ'ա-
կածիլ: Բայց այն Հայը որ չի յարգեր իր նախահարգ ե-
կեղեցին՝ անկէ բաժնուած ըլլալուն համար, կասկածելի
է միշտ՝ եթէ կը յանդէն ինքզինքն Հայ անուանել: Բայց
այսուհանդերձ իրաւունք չունինք ամէն Հայէ պահանջել
որ անպատճառ Հայ եկեղեցւոյ վերաբերի, Հայ մը եղած
ըլլալուն համար: Հայ մարդը կրնայ Հայ եկեղեցին սիրել
առանց անոր վերաբերած ըլլալու:

Թուրք Կառավարութիւնն իր վերջի կոտորածներուն
ժամանակ խտրութիւն ու զանազանութիւն չի դրաւ Հա-
յու և Բողոքականի մէջ տեղ, այլ անխնայ չարքեց ա-
մէնն ալ՝ ոչ թէ որովհետեւ այս կամ այն եկեղեցւոյ կը
վերաբերէին, այլ որովհետեւ ՀԱՅ էին: Եթէ Թուրքը, որ
«բաժանեա և տիրեսցիս» մարդապետութիւնն ի գործ դրած
է միշտ, այս խնդրոյն մէջ խտրութիւն չի դրաւ մեր մէջ,
մենք Հայերս ի՞նչ կոչուելու ենք երբ Թուրքին չըբաժը
ընել յանդէնք:

Նեղ և անձուկ չի մտածենք. թող բողոքականը իւր
տաճարին առջև երթալ ազգութիւն. Հռոմմէականը թող իր
եկեղեցին յանձնէ. լուսաւորչականն թող իր հին եկեղեց-
ւոյն փարած մնայ. բայց եկեղեցիէ դուրս ասոնք, ինչպէս
ըսած էր Հայրիկ, «Իբր Հայ և համազգի և միևնոյն Հայ-
րենեաց զաւակ թող խորհին վասն Հայրենի շինութեան»,
վասն զի Բողոքականն այնչափ Հայ է որչափ է Լուսաւոր-
չականն՝ ազգայնութեան ամենատուր խորհրդին առջև:

Իսկ մը դար առաջ մենք Բրիտանիայ շէնքը, բայց ՀԱՅ
էինք նորէն: Մեր նախահարգ իրենց կառավարչութեան,
կրակապաշտութեան ու արևապաշտութեան ատեն ՀԱՅ
էին դարձնալ: Մեր պատած Հայիկ, Տիգրանը, Արտաշէսն
ու Արտաւազը ո՛չ Լուսաւորչական էին, ո՛չ Բողոքական
և ո՛չ Բրիտանիայ: Մենք զանոնք կը սիրենք ո՛չ թէ այս
կամ այն կրօնքին վերաբերած ըլլալուն համար, այլ ո-
րովհետեւ մեր Հայ գիւցաղուններն ու նախահարգներն են:
Ազգութեան մէջ չկայ կրօնական խնդիր:

Հայութիւնը ո՛չ Հայաստանեայց եկեղեցիէն և ո՛չ ալ
ուրիշ ո՛ր և է եկեղեցիէ ծնաւ, այլ եկեղեցին ծնաւ ու
եկաւ Հայ ազգին համար.

Մանուցումը ոչ միայն Լու-
սաւորչական է, այլ և
առևտուրի կամ գործի մը
յաջողութեան գլխաւոր բանալին: Թէ և գործ մը կրնայ
երբեմն առանց ծանուցումի ապրիլ, բայց անոր կեանքը
կարճատև կը լինի և երբեմն անօգուտ, ինչպէս որ առանց
Լուսաւորչականութեան մը երկար ատեն չի կրնար գոռնալ: Բա-
ղաւարթեալ վաճառական ազգաց հաւատքն ու զաւա-
նանքն է այս, որուն ապացոյցներն ամեն օր կը տեսնենք
մեր բոլորտիքը՝ կառքերու մէջ, պատերու վրայ, լրագրաց
մէջ և ամեն տեղ:

Մանուցումն կը նշանակէ ըսել ժողովուրդին թէ ի՞նչ
ունին վաճառելիք, կամ ինչ ծառայութիւն կրնան մատու-
ցանել ուրիշին: Մենք Հայաստանի մէջ ալ կ'ընենք այս
ամէնն, բայց իրարու խօսելով միայն. բայց Հոս ձևն ու
կերպը տարբեր է բոլորովին: Արևմտեան ազգերու մէջ
միջոցները տեղ ոյն ու պարագաներուն յարմարեցած են
ընդհանրապէս, և մենք ալ յարմարելու ենք անոնց:

Սակայն մենք Հայերս տարբեր կը խորհինք դեռ: Ա-
րևմտեան ձևով ծանուցանել կը ջանանք այդ մասին ծախ-
ուած ո՛ր և է դուրս անդառնալի կրօնուտ մը կարծելով:
Սակայն մեծ սխալ մ'է այս, և վնաս մը ամէնօրեայ գոր-
ծի մէջ, զի փորձերը ցոյց կուտան միշտ թէ առանց ծա-
նուցումի գործի մէջ չի կայ յաջողութիւն:
Փորձելու է համոզուելու համար: 2. է.

Մ Ա Ն Բ Ա Լ Ո Ւ Բ Ի

—Անցեալ կիրակի օր հոգեհան-
գրատի պաշտօն կատարուեցաւ Ս.
Ոսկերեան եկեղեցւոյն մէջ՝ ի յիշա-
տակ Ո. Կրտսեմի: Ս. Սաղ վար-
դապետ և Պատ. Հայկունի դանա-
նական քարոզներ խօսեցան ու հա-
մառօտ կերպիւ մեծ ծերունիի կեն-
սագրութիւնն պատմեցին:

—Անցեալ կիրակի երեկոյ ազատ
խորանի վերջի նիստը տեղի ունե-
ցաւ սովորական սրահին մէջ: Վար-
չութիւնն կ'ըսուի թէ Ամրան ամիս-
ներէ վերջ պիտի վերաբանայ զայն՝
եթէ ժողովուրդը փափաք յայտնէ:

—Մեր Ներվիչի թղթակիցը կը
գրէ թէ անցեալներն Ատարազարի
միտիօսարներէն Տիկին Հայտ տեղ-
ւոյն ժողովական եկեղեցիներէ մէ-
կին մէջ երկայն ճառ մը խօսեր է
Հայոց ինչ ինչ տկար կողմերուն վը-
րայ: Տիկին Հայտ ըսած է ի մէջ այ-
լոց թէ «խիստ դժուարին է այսպիսի
ժողովուրդի մը մէջ գործել. բայց
միտիօսարական կէտն այն է որ լու-
սաւորեալ Հայերը սկսած են մեզի
գալ՝ թողով իրենց հին եկեղեցին. և
այն աղջիկներն ու սղաքներն որք
մեր դպրոցները կը յաճախեն ան-
պատճառ բողոքական եղած են և
կ'ըլլան օրէ օր»: Տիկին Հայտի Պար-
նոմ պատմած է նոյն ժողովին թէ
ինչպէս Պոլսոյ մէջ դժուարութիւն-
ներ քաշած է Հայ կանանց հետ ծա-
նօթանալու համար: «Ուրիշ օր մը,
ըսած է Տիկին Պարնոմ, ուրիշ կին
մը տեսնելու զնացինք. Գուրգը զար-
կինք. և քիչ վերջ բացուեցաւ. բայց
երբ կինը տեսաւ որ մենք ենք, դու-
ռը երեսունու վրայ գոցեց ու «տա-
տաններ» ըսելով ներս գնաց: Բայց
կոտորածներէն վերջ երբ նպաստ ըս-
կեցինք բաժնուիլ, այսպիսիներն փոխ-
ուած գտանք բոլորովին: Նպատար
մեծ առիթ մը եղած է Սուրբ գիրք
տարածելու համար»:

—Մեր Նէշուէի թղթակիցը կը
գրէ Մայիս 21 թուականաւ. «Քաղա-
քիս Փրէս Լրագրի այս աւուր թուին
մէջ կը կարգանք թէ երէկ երեկոյ
Յակօր Մուրատեան անուն անձը իւ-
րանտացի աղջկան մը հետ դժուար
ութիւն մը կ'ունենայ զինտան մէջ,
որ այս վերջոյ ամաստանութեամբ
կը ձերբակալուի. և այսօր դատուե-
լով § 16ի չափ տուգանք և ծախք կը
վճարէ»: Մ. Մուրատեան, որոյ այս-
օրինակ արարքներն զարմանք չեն
պատճառուի մեզ, երկար ատենէ իվեր
մնաս բարեան ըսած է արդէն ամէն
բանի, և անձնատուր եղած է փողո-
ցային վայելքներուն:

—Շիբակոյնն կը գրեն մեզ թէ
Մայիս 22ին տեղւոյն Հայ գաղութը
հետեւեալ հեռագիրը յղած է Տ. Մաշ-
թոց վարդապետին. «Միացուր Շի-
բակոյ Հայոց ձայնը Տիկին Կրտսե-
մի տրուելիք ցաւակցական հե-
ռագրին»:

—Տ. Մ. Մուրատեան Մայիս 29ին
մեկնեցաւ Լէօնարտիս փոխադրանա-
ւով դէպի Նիւ Փորթ Նիւս, և անկէ
Բի Ուէսթի:

—Մեր Նէշուէի թղթակիցը կը
գրէ. «Քիւնտայքի մասին Եփրատի
գրածը բոլորովին սխալ է. ո՛չ Հայե-
րուն հեռագիր եկած է, և ոչ որ և է
ուրիշ բան: Միայն Տիգրիսի նախորդ
լուրին տարածայնութիւնն է, զոր ի-
նչ կը խնդրեն որ հերքեմ»:

—Թրոյի Որբանանմ ընկերութիւ-
նը նիստ ըրաւ անցեալներն իր ունե-
ցած 17 տարւոր նպատակին յատկա-
ցնելու համար որոշում մը անցնելու
նպատակաւ բայց ներկայից թիւն օ-
րինական չըլլալով յետաձգուեցաւ:
Մեր թղթակիցն կը բողոքէ Որբա-
խընամներու այս ընթացքին դէմ:

2. է.

ՈՒ Է. ԿԼԱՏՐՍԹՈՆ

Կլատրսթոնի մահուամբ Անգլիա կորսնցուց իր ամենաշնորհալու քաղաքագետներէն մին. անոր օրով Մեծն Բրիտանիա հիմնական այնպիսի բարեւորութիւններ կրեց որ եթէ այսօր դարուս սկիզբներն ապրող անգլիացի քաղաքագէտք յարութիւն աննն գան, անկարող կ'ըլլան թերևս իրենց Հայրենիքը ճանչնալ, վասն զի այսօրուան Անգլիան նոր երկիր մը կը ներկայացնէ, զոր մօտէն ըննող մէկը կ'ստիպուի ձայնակցել Լատին բանաստեղծին՝ Հարրիսի և ըսել մեծ ծերունիին կողմէ «Նոս օմնիս մօրիար» — բոլորովին չի պիտի մեռնիմ ես: Եւ իրօք Կլատրսթոնի պէս մարդիկ չեն մեռնիր. անոնց անունն ու գործերը յաւիտեանս կենդանի կը մնան աշխարհի վրայ:

Մէկը որ պատմութեան կը մերարբերի, մահուամբ միայն կրնայ ազատել իր մահացու մեղքերէն, ու անմահանալ աշխարհի վրայ: Այսպիսեաց գործերն ու անոնց մտքի և սաղմոսի մեծութիւնն ճանաչելու ու ըմբռնել կարենալու համար՝ մարդիկ նախ անոնց մեկնելուն կ'սպասեն, վասն զի մահը, կ'ըսէ Յրէտէրիս Նելլէ, մարդոց բարձրանալու սանդղակն է կեանքի մէջ:

Կլատրսթոնի բարձր արժանիքը մեր ընթերցողաց առջև պարզելու համար, բաւ է անոր համառօտ կենսագրութիւնն ղեկ հոս, որ իր մէջ երկու մեծ փառքեր կը պատկերացնէ՝ ճշմարտասիրութիւն և մարդասիրութիւն:

Կլատրսթոնի հայրը Լիվըրքուլի մէջ ցորենի հարուստ վաճառական մը էր, որ կը հաւատար Բանինկի գերեզմանատեղեան ընթաց վարդապետութեան: Այս մարդ ունէր չորս զաւակներ, որոց կրտսերը Ուիլիամ էվէրթ ծնաւ 1809 թ. Գեկտ. 29ին: Ուիլիամ իր նախնական կրթութիւնն առաւ Լիվըրքուլի մասնաւոր դպրոցներէ մէկին մէջ, ուսկէ մտաւ Իթըն վարժարանը, որ շատ մը հռչակաւոր անձանց առաջին կրթավայրն եղած է: Մանուկ Ուիլիամ իր դասատուներու խորին ուշադրութիւնն դըրուակց իբր ունէր, աշխոյժ ու փայլուն ապագայ մը խոստացող մի մանուկ: Անգլիոյ ապագայ նախարար պետը՝ թուագիտութեան մէջ շատ յաջողակ էր, անանկ որ կրնար Շաթթօպիլյանի պէս պարծենալ թէ «Էջերու կամուրջը» (երկրաշափական մի անուն) կրցած էր դիւրութեամբ անցնել: Իթընէ՝ Ուիլիամ Օքսֆորթի համալսարանն մտաւ, ուր սորվեցաւ Լատիներէն, Յունարէն, Փիլիսոփայութիւն, Հափագիտութիւն և ընդհանուր գրագիտութիւն: 1830ին աւարտեց իր ուսման շրջանն ու յաջող ըննութեամբ ամենաբարձր մըրցանակը — սուվըր օնըրը — խնց:

Նիւ Բասըլի դիպլոմատիկ նախնական մէկին ներկայացուցիչը մեռած ըլլալով, 1832ին Կլատրսթոնն որ անասնն Հոռով կը գտնուէր, Անգլիոյ կանչուեցաւ և նիւ Բասըլի դիպլոմատիկ վեհաժողովին անդամ ընտրուելով, իւր 23 տարեկան հասակին մէջ մտաւ Ուէսթ Մինիսթըր, ուր շատեր իրենց 50 տարեկան հասակին մէջ նորընծայ մտնելն մի մեծ փառք կը սկսեն:

Կլատրսթոն, որ կրօնական կեանքի միտում մը ունէր, ընդարձակ սասարկէր մը բացուած գտաւ իր առջև, և նախապատիւ սեպեց շարժարուող մարդկութեան ծառայել, քան կրօնական կեանքի մէջ միտնալու: Թի փարլամենթական կեանքը սկսեցաւ պահպանողական դրօշակին տակ, և իւր առաջին ճառը, որ գերեզմանատեղիին կը ջատագովէր արևմտեան Հնդկական կղզիներուն համար, ցոյց տուաւ

թէ ճարտար երիտասարդը կոչում ունէր որ մը Բրիտանական Կայսրութեան սանձերն իր ձեռաց մէջ առնել:

Սըր Բոպէրթ Փիլ, այն ատենի նախարարապետը 1835ին Կլատրսթոնը Գաղթականական նախարարութեան (Քօլօնիէլ) ենթաբարտեղար անուանեց. բայց այս պաշտօնն շատ կարճ կեանք մը ունեցաւ, զի Փիլի նախարարութիւնն հրաժարեցաւ նոյն տարուայ Ապրիլի մէջ, և Կլատրսթոն մնաց հետևարար ընդդիմադիր կուսակցութեան հետ: 1838ին Կլատրսթոնն փարլամենթի անդամ ընտրուեցաւ նորէն, և նոյն տարուայ մէջ Քըրեյ իր հռչակաւոր գիրքը՝ «Կառավարութեան յարաբերութիւնն Եկեղեցոյ հետ», որ մեծ հակաճառութիւններ յառաջ բերաւ յԱնգլիոյ և ուրիշ անդեր: 1842 ին Կլատրսթոն վաճառականական գործոց նախարար անուանուեցաւ, ու Թարիֆայի մէջ այնպիսի արմատական փոփոխութիւններ մտցուց որ իր հանձնարն ու կարողութիւնը յայտ անեց աշխարհի առջև: Սակայն մէկ տարիէ վերջ՝ չի կրնալով համաձայնել իր ընկերներուն հետ, հրաժարեցաւ այդ պաշտօնէն. բայց զի վերջ գաղթական գործոց նախարար անուանեցաւ:

Այս թուականներուն ազատ վաճառականութեան խնդիրն նոր ծնած և Մանչէսթըրի հռչակաւոր վարժարանը նոր հաստատուած էր: Այդ շարժմանց հայրերն և նոր դրութեան առաջնայիններն եղան Քօփտըն և Պըրայթ: Բոպէրթ Փիլ համակրեցաւ այս նոր վարդապետութեան, և Կլատրսթոն հետևեցաւ անոր: Այս մասին նիւ Բասըլի դիպլոմատիկ ընդհանրութիւն յայտնեց, ու Կլատրսթոն հրաժարեցաւ փարլամենթէն: Սակայն քանի մը ամիսներէ վերջ զանձային գործոց նախարար անուանուեցաւ. և այս առթիւ իր հռչակաւոր պիւտճէն ներկայացուց, խոստ ըննադատութեանց ենթարկելով իր նախորդներու ուղղութիւնն ու ընթացքը: Ժողովրդի վրայ այնպիսի խոր տպաւորութիւն ձգեց այս պիւտճէն խնդիրը, որ անոր հակաճառութեան օր փառլամենթէն ծայրէ ծայր հետաքրքիր բողոքութեամբ լեցուած էր: Կլատրսթոն վեց ժամ խօսեցաւ այդ օր, առանց իր ունկնդիրներն ձանձրացնելու: Անոր դիւրիչ ու քաղցր ձայնին հետ ժամերը լրագիտարարութեամբ անցած էին այդ խառն բազմութեան վրայէ:

Կլատրսթոնի նշանակելի գործերէ մին եղաւ այն ատեններն սուրճի և թէյի վրայ եղած տրոց նուազումը. անուղղակի տրոց դրութեան հաստատութիւնը. Լրագրաց դրօշմի (փուլ) ընթացքը ևն:

Որի մի պատերազմին ատեն, 1852, Լօրտ Ապըրտինի նախարարութեան մէջ Կլատրսթոնն զանձային գործոց նախարար էր: Նոյն պատերազմէն յառաջ եկող նիւթական մեծ միջառը Կլատրսթոնն իր զանձային մեծ ճշմտութեամբ թոյլ շիտուաւ որ ծանրանայ բոլորովին ժողովրդի վրայ, և այդ առթիւ մեծ համարաւ շահեցաւ: 1866ին հռչակաւոր բարենորոգմանց ծրագիրը ընդունել տուաւ փառլամենթի մէջ, և այդ առթիւ էր որ իր ամենէ ճարտար ու նշանաւոր մի ճառը խօսեցաւ: (Շարունակելի)

Ղազի Օսման Փաշա—Սքանչելի լուր, վեհափառ Տէր:

Սուլթանը—(Գիշերանոցով) Ի՞նչ է լուրը Օսման:

Ղ. Օ. Փ.—Կլատրսթոն կեանքը մեռաւ այս առաւօտ:

Սուլթանը—Ի՞նչ դժբաղդութիւնն ինչ առաջ պիտի հանի՝ անդի աշխարհին մէջ ալ պատիւս մէկ փայլի ընելու: ՍՈՒԻՆ

ՆԱՄԱԿ ԲԱՆԱԿԱՏԵՂԻՆ

Սալթի Յրէմիկ համ, Մայիս 19 Այսօր մի քանի շարաթէ ի վեր է որ կը գտնուիմ հոս՝ Մասաչուսէթսի բանակատեղին՝ իբր կամաւոր և սափրիչ: Նահանգապետի հրամանաւ մեր գունդին արգիլուեցաւ մեկնիլ, ուստի պիտի սպասենք երկրորդ հըրաւանին:

Մենք երկու Հայեր էինք, մին՝ Մ. Մ. Ե. կամաւոր և սափրիչ. իսկ միւսն Լ. Ս. սափրիչ: Երբ որոշուեցաւ մեզ հոս մնալ, խոհեմութիւն սեպեցինք սափրիչութիւն ընել աւբողջ զօրաց:

Շատ հետաքրքրական է նոր զինւորներու կացութիւնը հոս: Ամէն օր գունդ գունդ կուգան կամաւորներ ու պէտք եղած ըննութիւնն անցունելի վերջ՝ մասնաւոր պաշտօնեաներու կը յանձնուին՝ մարզանք սովորելու համար:

Մեր հոս հասնելէ քանի մը օր վերջ երկրորդ վաշտը հրաման ստացաւ մեկնելու. որոց երթալէն քանի մը օր վերջը ութերորդ վաշտն ալ մեկնեցաւ. և այժմ վեցերորդն ալ կը պատրաստուի երթալ:

Շատ սրտաճմիրկէ ասոնց մեկնելու տեսարանն, երբ մայրեր, քոյրեր և սիրելիներ վերջի մնաւ բարեաւն կ'ըսեն անվեհեր զինուորներին: ՀԱՅ ԿԱՄԱՆՈՐ ՄԸ

ԲԱՆԱՏԵՂԻՆ ԱՄՆԱՆ ՄՐՑՈՒՄ Ի Մ Ս Ի Ր Ա Մ Ս

Իմ սիրածը Հայուհի մ'էր վարդայտ, քեզոյ, ժպտադէմ, Աչքը հոյ էր ուղկան, սիրտը սիրոյ էր եղեմ,

Պարկեշտութեան, գեղոյ, շնորհաց պատկեր մ'էր նէ կենդանի. Համեստ ձրից, անմեղ վարուց, բարի գործոց ընտանի:

Իմ սիրածը Հայ մօր գուակ, Հայու դաստիկ մ'էր սիրուն, Եօթնետասան գարնանց շնչով՝ զեփոռով յաւէրժ պարարուն.

Նէրա շրթներն երանութեան աղբիւր մ'էին մշտաճոս, Թէ և լուին, բայց անբարբառ մի թարմութեամբ պերճախօս:

Իմ սիրածը Հայու կաթով սնած մեծցած մի կոյս էր, նէ ինձ համար կ'ոնձնառորէր սէր, կեանք, ժպիտ և յոյսեր. նէ Մայիսի ջիւղ ցօղիկն էր, այլած հոգւոյս իմ համար,

Արշալոյսի ամբիժ շողը՝ վերև սրտիս սիրակար: Իմ սիրածը, նէ ոչ ևս է: Առ քեզ, ո՞վ մահ անողք,

Սրտիս յոյզէն, հոգւոյս վշտէն առ քեզ բառնամ ես բողբոջ. Դո՛ւ մարեցիր երջանկութեանս արևն զուարթ, լուսաշող,

Եւ դու միայն կարես հանգիստ ինձ պարգեւել ի սև հող: Թոյլ, Յուն. 27 ՍԱՆԻՄ

ՄԱՀԱԳՈՑԻ

Մայիս 15ին Լովէլի մէջ իր մահ կանացուն կնքեց Պ. Կարապետ Առաքելան ի հասակի 30 ամաց: Թաղումը տեղի ունեցաւ նոյն ամսոյ 18ին Տ. Մալթոյ վարդապետի պաշտօնավարութեամբ: Հանգուցեալը բնիկ Մաղկերտցի էր, որ ճիշդ տարիէ ի վեր պանդխտած էր յԱմերիկայ:

Յրէջողէն Ապրիլ 16 թուականաւ կը գրեն «Բանի մը օր առաջ Ալէքսան Պետրոսեանի գեղանի 17 ամեայ դուստրը իր մահկանացուն կրնեց: Բոլոր գաղթականութիւնն ողբաց դժբաղդ օրիորդին վաղահաս մահը:

ՆՈՐԱՎԷՊ ԱԶԳԱՅԻՆ

ԱՆՄԵՂ ԶՈՂԵՐ Ա.

Չմեռուայ առաջին ամիսն էր, առաւօտեան շատ շուտ, միջին հասակի՝ սև աչք ունեով, գեղադէմ Երիտասարդ մի օտարունի, ձախով իւր զաւակներից միջնակի փոքրիկ Շուշանիի ձեռքն բռնած, աղով վեց ամսական Գուրգէնին գրկած, յամբարայլ, մասմոյր թափառում էր Նիւ Եօրքի խուլ փողոցներից միում. նա, երբեմն ետին նայելով, խրախուսում էր հինգ տարեկան վարդիկին. երկամս մօր ձայնը լսելուն՝ վաղում բռնում էր նորա հնամաշ գէրեայի փէշից. բայց երբ աչքին էին ընկնում խանութների դիմաց ցոյցի դըրուած գոյնզգոյն քաղցրաւենիների հրապուրիչ տեսքը, բաց էր թողնում մօր փէշը, որ մօտկանց դիտէ իւր ուշն ու միտքը գրաւող քաղցրաւենիներն ու պէս պէս մանկական խաղալիքները:

Եղանակը սաստիկ ցուրտ էր. Հիւսիսային քամին ձրենախառն անձրևի ուղղակայեաց անկումը շեղելով՝ շեշտակի խփում էր նորանց գունատ երեսներին՝ սպառնացնում անպատրաստ մարմինները: Այս ուղղութիւնով հասնել էին փողոցի անկեան, ուր վարդիկը ամբողջ մարմնով գտղ բռնած, առամներն անընդհատ իրար խփխփելով կ'մկմաց:

Մա՛յ-ը՛րիկ, չ'հա-ա-սա՛նք. Խեղճ կինը կաթոգին հայեացքը դարձնելով մէկ դաւակնների, մէկ էլ շուրջը, խեղդուած ձայնով բացաւանչեց:

—Օ՛, ո՛ւր ենք դնում, ա՛խ, մօլորուեր ենք,— և ընթացքը փոխեց դէպի եկած կողմը: Բամու հոսանքը յետևից էր փչում. երկխաները ազատ շունչ քաշեցին: Երիտասարդ գեղեցկուհին հասնելով լայն պողոտայի անկիւնը՝ նորից ընկաւ վարանման մէջ. կրկին դիտեց շուրջը:

—Հիմայ գտայ, արագ-արագ քալեցէք, շուտով կը հասնենք. ա՛յ, այն մեծ շինութեան մէջ է պառկած հայրիկը. —

Երկու բոպէից կանգ առան վիթխարի շինութեան մուտքի առաջ, բացօդեայ փողոցում, մինչև դռները բացին: Մինակ իրանք չէին ըստպատրու. մի մեծ բաղմութիւն առանց, կանանց, երեխայից. ոմանք՝ բաւական կոկիկ հագնուած, ոմանք՝ նուազ, և ոմանք իրանց նման ցնցոտիներով, նոյնպէս ինչպէս իրանք, սպասում էին դռների բացուելուն:

Հասաւ ցանկալի բոպէն. դռները բացեցան. սպասողներից իւրաքանչիւրը շտապում էր բոպէ առաջ իր սիրելիի մահճակալի մօտ գտնուիլ. ամենից վերջի մտնողը օտարունակն էր. նորա ընկնուած սիրտը միւսներից նուազ չէր տրոփում. բայց իր բեռը ծանր էր. մէկին գրկած, միւսի ձեռքը բռնած, մեծն էլ փէշից կախ ընկած, հարկաւ շէր կարող առաջ անցնել այն նեղ դռնից, ուսկից պարտաւոր էին մտնել, մուտքի տոմսակ ստանալ, առանց որի կ'արգիլուէին: Դռնապաններից մուտքի տոմսակը ստացաւ և երեխայից հետ առաջնաններից վար իջաւ ընդարձակ բակը:

Մինչդեռ միւսները այս ու այն դռներից ներս մտան. սա, ընդհանրապէս, վարանեցաւ. քայլերը չէին հնազանդում իր կամքին. ծնւեբը ծախում էին, մի ներքին շարագուշակ զգացում բուռն կերպով ալեկոծում էր միտքը. սիրտը ուժգին բաբախում էր:

(Շարունակելի)

